Հայտերի ներկայացման հրավեր (ՀՆՀ)

Երկիր՝ Հայաստան

Հայաստանի Հանրապետություն

Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր

ՎԱՐԿ No. 8539-ԱՄ

Էլ. հյուպատոսական համակարգի (մոդուլների) և ՏՏ սարքավորումների մատակարարում և տեղադրում

IFB No: PSMP3-GO-2-2-8

1. Հայտերի ներկայացման սույն հրավերը (ՀՆՀ) հետևում է **2016թ-ի սեպտեմբերի 26-ին** այս Ծրագրի համար UNDB կայքում առցանց զետեղված Գնումների ընդհանուր ծանուցմանը:

2. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) վարկ է ստացել **«Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի»** ֆինանսավորման նպատակով և նպատակ ունի այս **վարկային միջոցների** մի մասն օգտագործել սույն ՀՆՀ-ի արդյունքում կնքված համաձայնագրի (-երի) շրջանակներում Էլ. հյուպատոսական համակարգի (մոդուլների) և ՏՏ սարքավորումների մատակարարման և տեղադրման դիմաց վճարումներ կատարելու համար:

3. ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն հանդես է գալիս որպես ծրագրի իրականացման գրասենյակ և ներկայումս հրավիրում է ընդունելի և համապա-տասխան որակավորում ունեցող հայտատուներին ներկայացնել փակ ծրարներով հայտեր՝ Էլ. հյուպատոսական համակարգի մշակման/ արդիականացման, ինչպես նաև ՏՏ սարքավորումների գնման համար: Համակարգի նպատակն է կառավարության տարբեր ծառայությունները միավորել մեկ էլեկտրոնային համակարգում, որպեսզի հնարավոր լինի այս ծառայություններն արագ և հեշտությամբ տրամադրել ՀՀ-ում տեղակայված դեսպանություններին և հյուպատոսություններին: Ծրագրային ապահովման ծառայությունների օրինակելի ցանկը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

a. Դատատվածության բացակայությունը հավաստող տեղեկանք,

b. ամուսնության վկայական,

c. նոտարական հավաստում և թարգմանություններ,

d. անձնագրի վավերականության ժամկետի երկարացում,

e. վերադառնալու մասին տեղեկանքներ,

f. արտերկրում մնացող և բնակվող ՀՀ քաղաքացիների հյուպատոսական գրանցում

4. Մրցույթը կանցկացվի «ՎԶՄԲ Վարկերի և ՄԶԸ փոխառությունների շրջանակներում գնումների համար» մշակված ՀԲ ուղեցույցների շրջանակներում Միջազգային մրցակցային մրցույթի (ICB/ ՄՄՄ) ընթացակարգերի համաձայն (*Բանկի կողմից հրապարակված 2011թ-ի հունվարին և վերանայված 2014թ-ի հուլիսին*), և հայտ կարող են ներկայացնել սույն Ուղեցույցի համաձայն ընդունելի համարվող բոլոր այն Հայտատուները, որոնք համապատասխանում են որակավորման հետևյալ նվազագույն չափանիշներին:

Որակավորման չափանիշեր

պահանջ	**Մեկ ընկերություն**	**ՀԶ (առկա կամ նախանշվող)**		
		Բոլոր անդամները /գործընկերները միասին	**Յուրաքանչյուր անդամ/գործընկեր**	**Մեկ անդամը/գործընկերը**
a. Փորձ				
ՏՀՏ ոլորտում աշխատելու առնվազն 5 տարվա փորձ	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ

պահանջ	**Մեկ ընկերություն**	**ՀՁ (առկա կամ նախանշվող)**		
		Բոլոր անդամները /գործընկերները միասին	**Յուրաքանչյուր անդամ/գործընկեր**	**Մեկ անդամը/գործընկերը**
Էլ. կառավարման առցանց համակարգերի մշակման առնվազն 3 տարվա փորձ	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ
2011-2016թթ-ի ընթացքում համանման արժեքի և բնույթի առնվազն 3 պայմանագրերի՝ հաջողությամբ իրականացման փորձ՝ նշելով գնորդին, պայմանագրի գինը և մատակարարված ապրանքները	Պետք է բավարարի պահանջը:	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Կիրառելի չէ
b. Տեխնիկական կարողություններ				
Հայտատուն կամ վերջինիս նշանակված ենթակապալառուն պետք է ունենա երաշխիքային սպասարկման կենտրոն կամ որպես Ծրագրի նախնական պլանի մի մաս պետք է ներկայացնի Բաժին VI-ի՝ «Տեխնիկական պահանջներ»-ի համաձայն երաշխիքային սպասարկման ծառայությունների և տեխնիկական աջակցության	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Կիրառելի չէ	Պետք է բավարարի պահանջը:

պահանջ	**Մեկ ընկերություն**	**ՀՁ (առկա կամ նախանշվող)**		
		Բոլոր անդամները /գործընկերները միասին	**Յուրաքանչյուր անդամ/գործընկեր**	**Մեկ անդամը/գործընկերը**
տրամադրման նպատակով Երաշխիքային սպասարկման նման կենտրոն ստեղծելու մանրամասները:				
c. Ֆինանսական կարողություններ				
Հայտատուները պետք է տրամադրեն իրենց ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) տարիների համար (այն է՝ 2014թ., 2015թ. և 2016թ.)	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ
Վերջին երեք (3) տարիներից (այն է՝ 2014թ, 2015թ և 2016թ) ցանկած երկու (2) տարիների ընթացքում տարեկան միջին շրջանառությունը պետք է հավասար լինի այս պայմանագրի համար Հայտատուի կողմից առաջարկվող արժեքին:	Պետք է բավարարի պահանջը:	Պետք է բավարարի պահանջը:	Կիրառելի չէ	Գլխավոր գործընկերը/ գլխավոր մատակարարը պետք է համապա-տասխանի պահանջների առնվազն 50%-ին:

5. Հետաքրքրված, ընդունելի հայտատուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից և Մրցութային փաստաթղթերն ուսումնասիրել Երևանի ժամանակով 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում ստորև ներկայացվող հասցեում:

6. Հետաքրքրված հայտատուները մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթն անգլերեն լեզվով կարող են ձեռք բերել ներքոհիշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելուց և ՀՀ 20,000 դրամ անհատույց վճարում կատարելուց հետո: Վճարումը կկատարվի ստորև նշված ԱՖԾԿԿ-ի հաշվին վերոնշյալ գումարի փոխանցելու եղանակով: Փաստաթղթերի տպագիր տարբերակը կհանձնվի Հայտատուի ներկայացուցչին: Ի հավելումն տպագիր տարբերակին, փաստաթուղթը անհրաժեշտության դեպքում նաև կուղարկվի էլեկտրոնային փոստի միջոցով: Մրցութային փաստաթղթերը (անվճար հիմունքներով) նաև կարելի է ներբեռնել www.gnumner.am(http://gnumner.am/am/category/129/1.html) կայք-էջից: Ավելին, ԱՖԾԿԿ-ն պատասխանատու չէ կայք-էջից փաստաթղթերի սխալ կամ թերի ներբեռնման համար կամ Մրցութային փաստաթղթի հավելվածի բացակայության համար: Տպագիր և էլեկտրոնային տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում գերակայող կհամարվի տպագիր տարբերակը:

Արտերկրից վճարումների համար

Միջնորդ բանկ՝ JPMorgan Chase Bank, N.A., New York, NY USA

SWIFT BIC: CHAS US 33

Հաշվեհամար՝ 001 1 010782

Շահառու բանկ՝ ՀՀ կենտրոնական բանկ, Երևան, ՀՀ

SWIFT BIC: CBRA AM 22

Շահառու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն»

Հաշվեհամար՝ 900000900572

Տեղական վճարումների համար

Շահառու՝ ՀՀ ՖՆ-ի ԱՖԾԿԿ

Հարկային կոդ՝ 180255188

Շահառու բանկ՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Հաշվեհամար՝ 900000900564 (ՀՀ դրամ)

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով, մինչև **2017 թվականի մարտի 31-ը, ժամը 15:00-ը** (տեղական ժամանակով): Հայտերը պետք է երաշխավորված լինեն Հայտի երաշխիքով: Հայտի պահանջվող երաշխիքի գումարը կազմում է ՀՀ 9,000,000.0 դրամ կամ ազատ փոխարկելի այլ արժույթով համարժեք գումար: Ուշ ներկայացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն ստորև նշված հասցեում, **2017 թվականի մարտի 31-ին՝ ժ. 15:00-ին** (տեղական ժամանակով) հայտատուների այն ներկայացուցիչների ներկայությամբ, որոնք կցանկանան մասնակցել:

8. Հնարավոր հայտատուների ուշադրությունը հրավիրում ենք (i) այն հանգամանքի վրա, որ անհրաժեշտ է, որպեսզի հայտում վերջիններս հաստատեն, որ ողջ ծրագրային ապահովման համար կա՛մ տրված է գործող լիցենզիա, կա՛մ էլ ծրագրային ապահովումն արտադրված է հայտատուի կողմից, և (ii) խախտումները համարվում են խարդախություն, ինչը կարող է հանգեցնել Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող պայմանագրերի շնորհման համար անընդունելի կարգավիճակի:

պարոն Էդգար Ավետյանին

Գործադիր տնօրեն

«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ (ԱՖԾԿԿ)

ՀՀ ֆինանսների նախարարություն

Կառավարության տուն 1, Հանրապետության հրապարակ

Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն

Հեռ՝ +374 11 910 581

Ֆաքս՝ +374 10 545 708

Էլ. փոստի հասցե՝ info@ffpmc.am